

ԱՆՆԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

**ԴԵՐԱՆՎԱՆ ԵԶԱԿԻ ԵՎ ՀՈԳՆԱԿԻ ԹՎԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ**

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i68.147

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածն ուսումնասիրում է գրական արևելահայերենում, գերմաներենում, և ռուսերենում դերանուն խոսքի մասի թվակարգային հայեցակետը՝ հիմք ընդունելով վերջինիս հարաբերություն արտահայտող և ոչ միատարր ձևաբանական կազմությունը: Վերլուծության արդյունքում առանձնացվում են թվակարգային իրացման երեք հիմնական տիպերը՝ երկթվային դերանուններ, բացառապես եզակի թվով հանդես եկող դերանուններ և միայն հոգնակի թվով գործածվող դերանուններ: Դերանվան՝ բառային և քերականական պլանում ընդհանրական և ոչ միատարր ձևաբանական դրսևորումները հնարավոր են դարձնում վերջինիս ոճական բազմաշերտ դրսևորումները, որոնք հատկապես թվակարգի տեսանկյունից աչքի են ընկնում ճկուն և տարաբնույթ իրացումներով՝ ցույց տալով, որ եզակի թիվը, ընդգրկելով առավել ընդարձակ իմաստային դաշտ, երբեմն հնարավորություն է տալիս միտքը դարձնել առավել ընդհանրական, տարածական առումով ավելի ընդարձակ, քան հոգնակի թիվը: Եզակի և հոգնակի ձևերի կառուցվածքային ու իմաստային անհամաչափությունների եռալեզու ուսումնասիրությունը միտված է բացահայտելու ինչպես ընդհանրական, այնպես էլ միայն մեկ լեզվին հատուկ օրինաչափությունները, որոնք արտացոլում են տվյալ լեզվի մտածողության ու քերականական համակարգի առանձնահատկությունները:

Բանալի բառեր և արտահայտություններ. *դերանուն, եզակի, հոգնակի, անհոգնական, թվակարգ, տարահիմք, հավաքական ցուցիչ, թվակազմություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դերանունների թիվը, լինելով բառափոխական կարգ, արտացոլում է առարկայի կամ երևույթի քանակային ընկալումը: Բառային ու քերականական իմաստների ոչ միատարրության հետևանքով թվակարգային պլանում նկատելի են ոճական տարբեր իրացումներ: Քերականական թվի տեսանկյունից դերանունները բաժանվում են երկու խմբի՝ թվակազմությունը բացառող դերանուններ և թվի քերականական կարգ ունեցող դերանուններ, որոնք աչքի են ընկում եզակի թվի բովանդակային ուրույն դրսևորումներով և հոգնակի ձևերի կազմության ոչ միօրինակ միտումներով: Վերջիններս բաժանվում են հետևյալ խմբերի.

1. դերանուններ, որոնք ունեն թվակարգի երկու՝ եզակի և հոգնակի իրացման տարբերակներ,
2. դերանուններ, որոնք հանդես են գալիս միայն եզակի թվով,
3. դերանուններ, որոնք կիրառվում են միայն հոգնակի տարբերակով:

Թվակարգի այս երեք իրացումները քննենք առանձին - առանձին՝ ուշադրությունը գլխավորապես սևեռելով այն դերանունների վրա, որոնք առավել բազմազան են թվակարգային տեսանկյունից: Ուսումնասիրման համար ելակետային կընդունենք գրական արևելահայերենն ու վերջինիս կզուգադրենք ռուսերենի ու գերմաներենի դերանունների քանակային իրացումները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացվել է զուգադրական քննության միջոցով՝ անդրադառնալով գրական արևելահայերենի, գերմաներենի և ռուսերենի դերանուն խոսքի մասին թվի կարգին: Վերլուծությունն ընդգրկում է հետևյալ քայլերը.

1. **Տվյալների ընտրություն.** դերանունների քերականական կառուցվածքի, թվային փոփոխությունների և իմաստաբանական գործառույթների առանձնացում երեք լեզուներում:

2. **Համեմատական վերլուծություն.** լեզվական համակարգերի զուգադրություն՝ բացահայտելու կառուցվածքային և իմաստաբանական նմանություններն ու տարբերությունները՝ համապատասխան օրինակների վերլուծությամբ:
3. **Տեսական հիմնավորում.** լեզվաբանական աղբյուրների և քերականական տեսությունների համադրմամբ եզրահանգումների ձևակերպում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Եզակի և հոգնակի կարգային իրացումներ ունեցող դերանուններ

Դերանուն խոսքի մասի թվակարգային իրացումները կարող են մատնանշել միայն մոտավոր, ընդհանրական ակնարկվող քանակայնություն: Հետևյալ դերանուններն ունեն եզակի և հոգնակի կարգային անցումներ. անձնական՝ *ես, դու, նա, ինքս, ինքդ, ինքը*, ռուսերենի համար՝ *я, ты, он/она/оно* (երրորդ դեմք եզակի թիվ՝ սեռային տարբերակները, համապատասխանաբար՝ արական, իգական, չեզոք), գերմաներենի համար՝ *ich, du, er/sie/es* (երրորդ դեմք եզակի թիվ՝ սեռային համապատասխան տարբերակներով՝ արական, իգական, չեզոք), ցուցական՝ *սա, դա, նա, մյուս, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի* - *этот/-а,о, то, иной/-а,ое, другой/-а,ое, такой/-а,ое, такой же/-а,ое* - *der, die, das* (այս դերանունները միևնույն ժամանակ գոյականի սեռը արտահայտող հոդեր են), *dieser/-e, -es, jener/-e, -es, solcher/-e, -es, derjenige/-e, -es*, հարցական - հարաբերական դերանուններ՝ *ով, ինչ, որ, ինչպիսի* - *кто, что, какой* /- *а, -ое* - *wer, was, welcher/-e, -es, was für ein/-e,ein*, անորոշ՝ *այլ, ոմն, այսինչ, այնինչ, ուրիշ* - *иной/-ая,-ое, некий* /- *ая,-ое, такой* - *то/-ая,-ое, другой/-ая,-ое* - *anderer/-e, -es, ein gewisser* /- *e, -es, ebender/-e, -es, sonstiger/-e, -es* և այլն: Դերանունների թվակազմությունը բնութագրվում է ինչպես մասնիկավորմամբ (հայերենում՝ *-ք, -եր, -ներ*, գերմաներենի դեպքում՝ *-e, ուսերենի համար՝ -ue/ ые*), այնպես էլ տարահիմք և տարարմատ կազմությամբ (**Ջահուկյան Գ., 1974**): Այսպես՝ *ես* անձնական դերանվան հոգնակին չի կազմվում նույն դեմքի եզակիից, այլ տարարմատ և *-ք* վերջածանցի հավելմամբ՝ *մենք*, ռուսերենը՝ *я* - *мы*, և

գերմաներենը՝ *ich - wir*, որոնց դեպքում ևս ունենք տարարմատ (սուպլետիվ) հոգնակիի իրացում: Ինչպես գիտենք, հոգնակին տվյալ առարկայի քանակայնության աճը վկայող ցուցիչ է, և եզակի թվով առարկան կամ երևույթը հոգնակի դարձնելով, իր մեջ ամփոփում է հենց այդ նույն առարկայի հոգնակիություն, սակայն *մենք* դերանունը չի ենթադրում *ես+ես+ես*, այլ *ես* ու ներառյալ այլք, իսկ թե այլք ասելով պիտի հասկանանք *դու, դուք, նրանք*, ցույց է տալիս միայն համատեքստը, քանի որ, ինչպես մնացյալ դերանունների, այնպես էլ *մենք* դերանվան դեպքում, բառիմաստի բովանդակային դաշտը խիստ իրադրական է և որոշվում է համատեքստից կամ նվազագույն բառախմբի բովանդակությունից: *Մենք* - *wir* - *мы* դերանվան բովանդակային պլանի յուրահատկությունը, սակայն, սրանով չի սահմանափակվում: Եթե *մենք*-ի կազմի մեջ մտնող մարդիկ կարող են ըստ իրադրության լինել խոսակիցը, կամ երրորդ անձ կամ անձինք, ապա խոսողի ներակա ու կենտրոնական կարգավիճակը *մենք*-ի բովանդակության մեջ ենթադրելի է միշտ: *Մենք* դերանունը կարող է կիրառվել երկրորդ դեմքի եզակի և հոգնակի թվի փոխարեն: Այս դեպքում խոսողն իրեն ևս ներգրավում է խոսակիցների խմբում, իսկ խոսքը դառնում է մտերմիկ և պակաս պարտադրող, անգամ երբ խոսողն անմիջական մասնակիցը չէ գործողության, ինչպես, օրինակ, բժիշկ - բուժառու, ծնող - երեխա կամ ուսուցիչ - աշակերտ երկխոսությունների դեպքում և համանման այլ երկխոսություններում: Օրինակ. «Ну-с, сударыня, как мы себя чувствуем? - присел к ее койке знакомый врач Малинин» (թրգմ. «Դե, տիկին, ինչպե՞ս ենք մեզ զգում: Ծանոթ բժիշկ Մալինինը նստեց նրա մահճակալի մոտ») (**Ратушинская И., 2001**): «Nun, wie fühlen wir uns, Billa?» (թրգմ. «Ինչպե՞ս ենք մեզ զգում, Բիլլա») (**Horster H., 1991**): Այս դեպքում դերանունը մնում է նույնը՝ անձնական դերանվան հոգնակի թիվը, սակայն փոխվում է վերջինիս իմաստային ծանրաբեռնվածությունը. այն նշում է առավելապես խոսակցին կամ խոսակիցների խմբին: Այն դեպքերում, երբ խոսողը փորձում է շրջանցել իր գերակայությունը, ստվերում թողնել իր եսը, աշխատանքի կատարման մեջ իր ներդրումը, եզակի թվի փոխարեն իր խոսքում գործածում է

մենք՝ հոգնակի ձևը: Նման արհեստական բազմության հետևում թաքնված է հենց ինքը՝ խոսողը: Անձնական դերանվան հոգնակի բառաձևի նման կիրառությունը բնորոշվում է որպես *հեղինակային հոգնակի* (Pluralis auctoritatis) կամ նրբանկատության հոգնակի (**Nieberle S., Strowick E., 2006**): Օրինակ՝ «Աշխատանքում մենք անդրադարձել ենք այնպիսի խնդիրների...»: Տարբերակվում էր նաև *Գերազանցության* (կամ Մեծության, Վեհության) *հոգնակի* (Pluralis Majestatis) եզրույթը, երբ թագավորական ընտանիքի անդամներն ուղերձով ժողովրդին դիմելիս իրենց անձի մասին անձնական առաջին դեմք եզակի դերանվան փոխարեն օգտագործում էին հոգնակի՝ *մենք* դերանունը՝ ընդգծելով իրենց ուժն ու կարևորությունը: Անձնական դերանվան երկրորդ դեմքը՝ *դու* - ты - du նշում է խոսակցին, հոգնակի ձևը՝ դուք, вы, ihr, համապատասխանաբար, խոսակցին ու այլոց: *Դու*-ն եզակի թվում երբեմն կիրառվում է ընդհանրական, տեսակը, դասը մատնանշող բովանդակությամբ: Նման համատեքստում *դու*-ի փոխարեն կարող է հանդես գալ *մարդ* գոյականը՝ առհասարակ մարդուն, յուրաքանչյուր անհատին նշելու միտումով, սակայն դերանվանական իրացումը խոսքը դարձնում է առավել դիպուկ, շեշտակի և անմիջական՝ իր եզակի թվով մատնանշելով հոգնակի թիվ՝ դրա մեջ առանձնացնելով յուրաքանչյուր անդամի առանձին – առնաձին (**Աբրահամյան Ս., 1956**): Նման կիրառություն գտնում ենք կարգախոսներում, կոչերում, որտեղ հենց եզակի թվի կիրառումն է, որ անհատական ուղղվածություն է տալիս տեքստին, սակայն չի ենթադրում միայն մեկ անձի: Օրինակ, «Քաջություն ունեցիր օգտվելու սեփական խելքից»: Գերմ.՝ «Du kannst die Wellen nicht stoppen. Aber du kannst lernen sie zu surfen» (թրգմ. «*Դու չես կարող ծովի ալիքները կանգնեցնել, բայց դու կարող ես նավարկել սովորել*»): Ռուս.՝ «Верь, что ты можешь, и ты уже на полпути» (թրգմ. «*Հավատա, որ դու կարող ես, ու դու արդեն ճանապարհի կեսին ես*»):

Դու դերանվան հոգնակի թվի մեջ մտնող մարդկանց կազմը ևս փոփոխական է. այն կարող է ներառել խոսակցին ու մնացած մարդկանց, որոնք

այդ դեպքում խոսակցի հետ են հավասարվում ու նույնանում: Նման պարագայում կարող ենք հասկանալ «դու + դու+դու», քանի որ խոսողի տեսանկյունից բոլորն էլ դիտարկվում են տարբեր *դու*-եր, կամ *դու*՝ ներառյալ *նա/նրանք*, եթե խոսակցի հետ ենթադրյալ հանդես եկողները տարածականորեն ավելի հեռու են: Այս դեպքում խոսողի համար առանցքային է դառնում *դուք*-ի կազմում խոսակցի ներկայությունը: Այն, հոգնակի ձևով հանդես գալով (հայերենում՝ *Դուք*, գերմաներենում՝ *Sie* ռուսերենի համար՝ *Вы*), կարող է նշել ոչ թե խոսակցին ու այլ անձանց, այլ միայն մեկ հոգու՝ բնութագրվելով որպես քաղաքավարության և տարածության/հեռավորության ձև (*Distanzform*), ինչն առավելապես մատնանշում է սոցիալական տարբեր հարթության պատկանելը կամ ակնածանքը (**Engel U., 1996**): Ռուսերենի դեպքում քաղաքավարական *Вы* ձևի յուրահատկությունն առավելապես շարահյուսական բնույթ ունի: Այսպես՝ գոյականի կամ ածականի հետ հանդես եկող ստորոգելիի թիվը եզակի է, երբ այն արտահայտված է ածականական կամ դերանվանական կարճ կառույցով (*краткое прилагательное, причастие*), ստորոգելին հոգնակի է, եթե այն արտահայտված է դերանվանական կամ ածականական լիմաստ տարբերակներով (*полная форма прилагательного, причастии*):

Երրորդ դեմք եզակի թվում հանդես եկող *նա, ինքը* դերանունները ցույց են տալիս երրորդ անձին՝ խոսակցին: Հայերենում ունենք համապատասխանաբար՝ *նրանք, իրենք* հոգնակի բառաձևերը, որոնց բովանդակային ծածկույթը համապատասխանում է հոգնակի բառաձևի իմաստին՝ «նա+նա+նա»: Այս դեպքում առանձնահատկությունը կազմության մեջ է, քանի որ *-ք* վերջածանցն ավելանում է ոչ թե եզակի ուղղականի, այլ եզակի տրականի հիմքին՝ *իրենք-ք, նրանք-ք*: Գերմաներենի և ռուսերենի դեպքում երրորդ դեմք եզակի թվի համար ունենք սեռային տարբերություն՝ он - er՝ արական, она - sie՝ իգական, оно - es՝ չեզոք: Եթե *ես, դու, մենք, դուք*, համապատասխանաբար՝ я, ты - мы, вы և ich, du, wir, euch դերանունների դեպքում թիվը չի դիտվում որպես բառափոխական կարգ, ապա երրորդ դեմք եզակի թվի *նա* դերանվան դեպքում հայերենի և

ռուսերենի համար այն բառափոխական է, իսկ գերմաներենի դեպքում ունենք առաջին և երկրորդ դեմքերի նման տարարմատ կազմություն:

Գեղարվեստական գրականության մեջ նկատելի է նա դերանվան կիրառումն այնպիսի համատեքստերում, որտեղ ենթադրելի է վերջինիս հոգնակի թվով գործածումը, սակայն հեղինակն այսկերպ ապահովում է մտքի առավել համամասնական, ընդհանրական արտահայտումը: Եթե նրանք դերանվամբ հնարավոր կլիներ արտահայտել մարդկանց անորոշ, սակայն մասամբ սահմանափակ քանակ, ապա նման դեպքում եզակին դառնում է հավաքականության ցուցիչ և իր կիրառման ձևաչափով ու տարածականությամբ նմանվում եզակի թվով գործածվող ու ամբողջ ազգ, բնակչություն, տեսակ նշող գոյականներին: Դերանունների այդպիսի եզակի և հոգնակի տարբերակների բովանդակային ոչ լիակատար համընկնումն է, որ Օ. Եսպերսենը բնութագրում է որպես մոտավոր հոգնակի թիվ (**Есперсен О., 1958**):

Ցուցական դերանունները կարող են արտահայտել առարկայի հեռավորության վերաբերյալ մոտավոր տեղեկություն, ինչպես սա՝ հմպտ. *этот, эта, это*, *dieser, diese, dieses*՝ խոսողին մոտ, դա - *jener/-e,-es*՝ խոսակցին մոտ, նա/այն- *той/ та,то, jener/-e,-es*՝ երրորդ անձին մոտ գտնվող առարկա: Հոգնակին կազմվում է հայերենի դեպքում՝ եզակի տրականի հիմքին ավելացնելով *-ք* հոգնակիակերտ ածանցը՝ համապատասխանաբար՝ սրանք, դրանք, նրանք, ռուսերենի և գերմաներենի դեպքում՝ *эти, те, diese, jene* հոգնակիակերտ ցուցիչներից մեկի կցմամբ: Ռուսերենի դեպքում ցուցականությունն արտահայտող *этот/это, эта, эти, тот/та, то, те* դերանուններն առավելապես համապատասխանում են հայերենի *այս, այդ, այն* ցուցական դերանուններին, որոնք չունեն հոգնակիի կազմության հնարավորություն: *Этот, тот, ինչպես նաև все, всё* - բոլոր(ը), ամեն ինչ դերանունները, առարկայանիշ հատկության հետ մեկտեղ, ունեն առարկայի հատկանիշ ցույց տալու, հետևաբար նաև որպես լրացում հանդես գալու հատկություն, ինչը ենթադրում է թվի և սեռի համաձայնեցում գոյականի հետ:

Ով, ինչ - что, кто - wer, was հարցական - հարաբերական դերանունների դեպքում, եթե հայերենի համար ունենք համապատասխան *ովքեր, ինչեր* հոգնակի տարբերակները (*ով* դերանվան դեպքում հոգնակիի ձևավորման համար կիրառվում են -ք և -եր մասնիկները միասին՝ *ովքեր*), ապա գերմաներենի և ռուսերենի դեպքում միայն եզակիի բառաձևերը, որոնք կիրառվում են նաև հոգնակի ձևի համար, սակայն ռուսերենում *такой, такая* լրացական բառերի հետ գործածելիս հոգնակիի տարբերակումը դառնում է հնարարվոր, այսպես՝ кто такая, кто такие, что такое:

Ոմն/ոմանք - некий/ некие, некто տարբերակի դեպքում հոգնակի ձևի համար կիրառվում է некоторые բառաձևը: Գերմաներենի համար ունենք irgendjemand, jemand, welcher, welche, welches եզակի թվի դեպքում, իսկ հոգնակի տարբերակի համար կիրառելի է միայն welch - հիմքով բառաձևը՝ irgendwelche, welche:

Ամեն - всякий/всякая/всякое, любой/любая/любое - jeder/jede/jedes, jeglicher/ jegliche/jegliches, հոգնակի տարբերակները կլինեն՝ *ամենքը* - любые - jede/jegliche: Գերմաներենի դեպքում՝ alles - *ամենը, ամեն ինչ*, որտեղ շեշադրվում է երկույթի ամբողջականությունը, բայց ոչ դրա մեջ մտնող մասերը առանձին - առանձին:

Այլ և ուրիշ դերանունները, ուենալով եզակի թվի իմաստ, կարող են գործածվել և՛ եզակի, և՛ հոգնակի բառաձևերով հանդես եկող գոյականների հետ, այսպես՝ այլ միտք, այլ հարցեր: Մնացյալ դերանունների դեպքում հոգնակին աչքի է ընկնում կազմության միատարրությամբ և ձևավորվում է *-եր, -ներ* մասնիկների կցմամբ՝ այսպիսիները, այնպիսիները, այդպիսիները, նույնպիսիները, ուրիշները, որպիսիները: Այս դերանունների՝ *-ք* մասնիկի միջոցով հոգնակի թվի կազմության դեպքում (այսպիսիք, նույնպիսիք, ինչպիսիք) հոլովական հարացույցի հնարավորությունը բացակայում է, իսկ ռուսերենի և գերմաներենի դեպքում, համապատասխանաբար, ստանում են -и, -ие (такие,

դեպքում պատկերն այլ է: Այս դերանունն ունի կազմության աննշույթ, եզակի բառաձև, սակայն, ի տարբերություն հայերենի, որտեղ գոյականը դրվում է եզակի թվով՝ *մի քանի գիրք*, կիրառելի է գլխավորապես հոգնակի թվով դրված գոյականների հետ, ինչպես օրինակ, *несколько книг*, բառացի թրգմ.՝ «մի քանի գրքեր», *несколько человек*՝ «մի քանի մարդիկ»:

Հայերենում հոգնակի մասնիկավորումից զուրկ են նաև *այսքան* - *сколько* - *sovielmal*, *այդքան* - *столько* - *so viel*, *այնքան* - *столько/настолько* - *so viel* (հաշվելի գոյականների դեպքում համաձայնեցվում է գոյականի թվի հետ՝ *so viel Geld* - *այնքան գումար*՝ անհաշվելի, *so viel-e Leute* - *այնքան մարդիկ*) *նույնքան* - *столько же* - *so viel wie* դերանունները, սակայն, համատեքստից կախված, կարող են կիրառվել թե՛ եզակի, թե՛ հոգնակի իմաստով ու համապատասխանեցվել եզակի կամ հոգնակի թվով դրված ստորոգյալի հետ: Այսպես, եթե վերջիններս կիրառվում են առարկաների քանակային հարաբերությունը ցույց տալու իմաստով, ապա կրում են հոգնակի իմաստ, եթե խոսողի նպատակն է նշել առարկաների ընդհանուր, ոչ տարրորոշված չափը, այդ դեպքում ունենք իմաստով և ձևով եզակի դերանվան կիրառություն եզակի թվով դրված բայի հետ:

Այս, այդ, այն, մյուս դերանունների կիրառությունը երեք լեզուներում էլ բացառվում է այն դեպքերում, երբ տվյալ առարկան կամ երևույթը գոյություն ունի միայն եզակի թվով և համեմատության եզր չի հանդուրժում, քանի որ այս դերանունները արդեն իսկ ենթադրում են առարկայի՝ մեկից ավելի թվակարգային գոյությունը: Անշուշտ, այս օրինաչափությունից դուրս են մնում խիստ անհատական, համատեքստից բխող ոճական դրսևորումները: Այս դերանունները ունեն ոճական տեսանկյունից բազմաշերտ, սակայն թվակարգային տեսանկյունից միայն եզակի թվով կիրառություն:

Մյուս - *иной*, *другой* - *anderer/-e,-es* դերանունը զուգադրվող երեք լեզուներում էլ թվի տեսանկյունից չի դրսևորում բազմիմաստություն, ցույց է տալիս առարկայի նկատմամբ մեկ այլ՝ ժամանակով կամ տարածությամբ հաջորդող առարկա, սակայն թվակարգային պլանում *մի* անորոշ դերանվան

նման ցույց է տալիս անորոշություն, հոգնակի թվում՝ *մյուսները*՝ ունի ընդհանրական իմաստ, կիրառվում է անորոշ, հոգնակի, բայց չտարբերակված իմաստով:

Հետևյալ դերանունների շարքը՝ *ամեն* - всякий - jeglicher/-e,-es , *ամեն մեկը/ամեն մի, յուրաքանչյուր, յուրաքանչյուր ոք* - каждый - jeder/-e,-es, *ամեն ինչ* - всё - alles , համապատասխանաբար ժխտական՝ *ոչ ոք, ոչինչ, ոչ մի, ոչ մեկը* - никто, ничто, ничего, никакой/никакая/никакое - kein, niemand, nichts, ցույց են տալիս քանակային ամբողջություն՝ շեշտելով միաժամանակ ամբողջության մասը կազմող առարկաներն առանձին-առանձին: Գերմաներենում ևս jeder «յուրաքանչյուր(ը)», jedermann «յուրաքանչյուր ոք», ունենալով բացառապես անձնանիշ կիրառություն, ցույց են տալիս անորոշ, ընդհանրական քանակայնությամբ հանդես եկող բազմության մաս կազմող անձնանց՝ անհատապես: Առարկաներն իրենց ընդհանուր քանակի ամբողջությամբ են արտահայտում *ողջ, համայն, ամենայն, բոլոր, բոլորը, ամենքը* դերանունները - весь, все, всякий - alle, alle(rlei), sämtliche:

Գերմաներենի համար՝ kein «ոչ մի» ժխտական դերանունը, ժխտելով *ein* «մի» անորոշ դերանվանը, ունի և՛ եզակի, և՛ հոգնակի իրացման հնարավորություն, մինչդեռ *ein* «մի» անորոշ դերանունը հանդես է գալիս միայն եզակի թվով դրված գոյականների հետ: Եթե անորոշ դերանունները, իրենց մասնական հարաբերության շնորհիվ, մոտավոր գաղափար են տալիս թվի ու քանակի վերաբերյալ, ապա հարցական ու հարաբերական դերանունների քանակայնության գաղափարը արտահայտվում է բոլորովին անորոշ կերպով:

Գերմաներենում առանձին ուսումնասիրության նյութ է es «այն» անորոշ դերանունը, որը կիրառվում է անենթակա նախադասություններում՝ բնութագրվելով որպես expletives es «լրացական այն», օրինակ, es regnet «անձրևում է»: Գործողությունը կատարողի անհայտ լինելու դեպքում՝ Es klopft irgendwo - «թակում են/ է ինչ-որ տեղ» (**Eisenberg P., 2000**): Այս դերանունը մասամբ հարաբերակից է հայերենի *ինչ-որ, ինչ-որ մի, այն* դերանուններին և

մատնանշում է հիմնականում գործողություն կատարողին անհաղորդ, անձանոթ հոգեվիճակ, երևույթ կամ այլ իրողություն: Այն քերականական տեսանկյունից անհրաժեշտ, սակայն իմաստային հայեցակետից մասմաբ անբացատրելի և հաճախ չթարգմանվող դերանուն է: Համանման կիրառություն ունի անորոշ *man* դերանունը: Այն *մարդ, ոմն, մեկը, մի* ընդհանրական իմաստով, երբեմն գործածվում է նաև գործողությունը կատարողին անվանապես չհիշատակելու, *man sagt* «ասում են», ինչպես նաև անձնական *ես* դերանվան փոխարեն՝ խոսքին ոճական տեսանկյունից առավել չեզոքություն հաղորդելու միտումով: *Man* անորոշ դերանունը կիրառություն է գտնում նաև այնպիսի դեպքերում, երբ անհրաժեշտ է խոսքին հաղորդել ընդհանրական, հանրային բովանդակություն: Անորոշ *man* դերանունը բովանդային պլանում ունի թե՛ եզակի և թե՛ հոգնակի կիրառություն, սակայն կառուցվածքային տեսակետից այն հանդես է գալիս միայն եզակի բառաձևով: Այս դերանվան համանմանությամբ նկատելի է որոշ գոյականների՝ դերանվանական խոսքի մասի անցնելու միտում: Վ. Վինոգրադովը բազմաթիվ ընդհանրական, եզակի թվով տեսակը նշող գոյականների համար հնարավոր է համարում լեզվի զարգացման հետագա փուլերում դերանվան վերածվելու, ինչպես՝ *մարդ - человек - der Mensch* (գերմաներենի դեպքում դերանուն *man* բառաձևի նման), *բան - вещь - das Ding* (Виноградов В., 1986):

Միայն հոգնակի թվակարգային իրացում ունեցող դերանուններ

Անեզական կիրառություն ունեն բոլոր փոխադարձ դերանունները՝ *իրար, միմյանց, մեկմեկու/մեկմեկի*, գերմ. *einander* նախդրավոր տարբեր իրացումներով՝ *füreinander, zueinander, aufeinander, gegenseitig* որոնցից միայն *միմյանց* դերանունն է հոգնակի մասնիկավորմամբ հանդես գալիս, մյուս դերանունները հոգնակիի իմաստն արտահայտում են անեզական գոյականների նմանությամբ՝ ձևով եզակի, բովանդակային ծածկույթով հոգնակի: Քանի որ իրենց մեջ արդեն իսկ ներակայում են մեկից ավելի առարկաների, անձանց հետ որոշակի հարաբերություն, ինքնին ենթադրում են ոչ եզակի կիրառություն: Այս խմբի մեջ մտնող դերանունների քանակը բավականին քիչ է:

Իմաստային հոգնակիություն են արտահայտում նաև *բոլորը* - все - alle, *ողջ, ամբողջ* - весь - ganz որոշյալ դերանունները: Սրանք ևս չունեն հոգնակի ցուցիչ արտահայտության պլանում, բայց արտահայտում են հանրային, ընդհանուր իմաստ: Alle (ganz - ողջ, ամբողջ՝ անհաշվելի գոյականների դեպքում) որոշյալ դերանունը մատնանշում է երևույթի, առարկայի ընդհանրական բնույթը՝ վերաբերելով առհասարակ ամբողջ երևույթին կամ հասկացությանը և կրում է առավել ընդհանրական, ոչ տարրորոշված բնույթ: Այն քանակական թվականի ու գոյականի հետ իրացման դեպքում մատնանշում է պարբերաբար կատարվող, կրկնվող գործողություն և համապատասխանում է հայերենում *յուրաքանչյուր*, իսկ ռուսերենում՝ *каждый* որոշյալ դերանուններին: Գերմաներենում դերանունների հետևյալ խումբը ստանում է միայն հոգնակի թվով լրացում: *Sämtliche, alle* - *բոլոր, viele, vielerlei* - *շատ, բազում, einige* - *մի քանի, etliche* - *քանիցս, ոմանք, manche* - *ոմանք, wenige* - *քչերը, ein paar* - *մի քանի, մի զույգ, keinerlei, keine* - *ոչ մի, ոչ մի կերպ* դերանունները բովանդակային պլանում ունեն անորոշ, ոչ եզակի, ընդհանրական, քիչ քանակայնության իմաստից մինչ անորոշ, սակայն առավել մեծ քանակի արտահայտման ոճական տարբեր նրբերանգներ: Համապատասխանաբար ռուսերենում միայն հոգնակի թվով լրացումների հետ կիրառելի են *все* - *բոլոր* - *многие* - *շատերը* (հայերենի դեպքում *շատ* մակբայի գոյականաբար գործածություն), *несколько* - *մի քանի*, որոնց դեպքում ունենք գերմաներենի և ռուսերենի լիարժեք համընկնում, իսկ հայերենում գործածելի է եզակի թվով դրված լրացում: *Մի քանիսը* - *некоторые* - *einige* դերանվան դեպքում դերանվան և նախադասության մյուս անդամների միջև թվակարգային համապատասխանություն ունենք ինչպես հայերենում, այնպես էլ՝ ռուսերենում և գերմաներենում:

Ռուսերենում քանակ, չափ արտահայտող դերանունները, ինչպես թվականները, ելակետային ձևում չունեն թվակարգային տարբերակում, սակայն գոյականի հետ գործածվելիս թեք հոլովներում ստանում են հոգնակի մասնիկավորում և գոյականի հետ համաձայնեցվում թվով ու հոլովով: Ի.

Գոլանովը վերջիններս համարում է ոչ թե դերանուններ, այլ անորոշ-քանակական բառեր, որոնք տեղին է ուսումնասիրել քանակական թվականների հետ: Մատնանշելով առարկայի մոտավոր թիվ, քանակ՝ դրանք հանդես են գալիս որպես գոյականական լրացում, իսկ գոյականը դրվում է սեռական հոլովով՝ կազմելով շարահյուսական մեկ միավոր: Այսպես. сколько, много – сколько книг, много книг, скольких книгах, многих книгах (**Голанов И., 1962**):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրական արևելահայերենի, ռուսերենի և գերմաներենի դերանունները միայն անձնական դերանունների եզակի ու հոգնակի իրացման պլանում են դրսևորում մասնակի նմանություններ, իսկ մյուս դերանունների դեպքում թվակազմության հանդեպ ցուցաբերում են առավելապես տարաբնույթ, միայն տվյալ լեզվի մտածողությանն ու քերականական կանոններին համապատասխան հատկություններ: Մասնավորապես.

- 1) Դերանուններին բնորոշ է ոչ միայն ընդհանրական, չտարբերակված հարաբերությունների արտահայտումը, այլև դրանից բխող ոճական բազմազանությունն ու թվակարգային բազմաբնույթ իրացումները:
- 2) Դերանունների ինչպես իմաստային, այնպես էլ կառուցվածքային տարարժեքությամբ պայմանավորված՝ բազմազան է նաև թվակարգի հանդեպ դրանց զգայունությունը: Զգալի թիվ են կազմում ինչպես հոգնակի թիվ չունեցող, այնպես էլ եզակի իրացում չունեցող դերանունները, ինչն ամենևին չի բացառում թվակարգի երկու կարգային անցումներն ունեցող դերանունների գոյությունը:
- 3) Դերանունների թիվը մատնանշում է ընդհանրական քանակայնություն և հոգնակի եզրը կազմում ինչպես տարահիմք, այնպես էլ մասնիկավորմամբ: Հատկապես անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքի եզակի և հոգնակի իրացումներն աչքի են ընկնում քերականական և բառային թվի անհամաչափությամբ:
- 4) Դերանունների հոգնակի թվի կիրառման մասնավոր դեպքերը փաստում են, որ դրանք առարկայական վերաբերության ծավալի տեսակետից բավականին

առաձգական են՝ ընդգրկելով մեկ անձից, երկույթից մինչ առհասարակ բոլոր մարդկանց, ընդհանուր դասը կամ առարկաները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբրահամյան Ս. (1956)**, Արդի հայերենի դերանունները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
2. **Ջահուկյան Գ. (1974)**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
3. **Виноградов В. (1986)**, *Русский язык: Грамматическое учение о слове* (3-е изд.), Москва, Изд. “Высшая школа”.
4. **Голанов И. (1962)**, *Морфология современного русского языка*, Москва, Изд. “Высшая школа”.
5. **Есперсен О. (1958)**, *Философия грамматики*, Москва, Издательство иностранной литературы.
6. **Ратушинская И. (2001)**, *Одесситы*, Москва, Изд. “АСТ”.
7. **Eisenberg P. (2000)**, *Grundriss der Deutschen Grammatik, Der Satz*. Stuttgart Weimar: J.B. Metzler Verlag.
8. **Engel U. (1996)**, *Deutsche Grammatik*. Heidelberg: Julius Groos Verlag.
9. **Horster H. (1991)**, *Ein Herz spielt falsch*. Köln: Lingen Verlag.
10. **Nieberle S. & Strowick E. (Eds.) (2006)**, *Narration und Geschlecht: Texte, Medien, Episteme* (Literatur, Kultur, and Geschlecht. Große Reihe, Bd. 42). Böhlau Verlag.

REFERENCES

1. **Abrahamyan S. (1956)**, *Ardi hayereni deranownnery' /The Pronouns of Modern Armenian/, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.*

2. **Jahukyan G. (1974)**, Jhamanakakic hayereni tesowt'yan himownqner /Fundamentals of the Theory of Modern Armenian/, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.
3. **Vinogradov V. (1986)**, Russkiy yazyk: Grammaticheskoye ucheniye o slove /The Russian Language: The Grammatical Doctrine of the Word (3rd ed.)/, Moscow, Higher School Publishing House.
4. **Golanov I. (1962)**, Morfologiya sovremennogo russkogo yazyka /Morphology of the Modern Russian Language/, Moscow, Higher School Publishing House.
5. **Jespersen O. (1958)**, Filosofiya grammatiki /The Philosophy of Grammar/, Moscow, Publishing House of Foreign Literature.
6. **Ratushinskaya I. (2001)**, Odessity /The People of Odessa/, Moscow, AST Publishing House.
7. **Eisenberg P. (2000)**, Outline of German Grammar: The Sentence. Stuttgart Weimar: J.B. Metzler Verlag.
8. **Engel U. (1996)**, German Grammar. Heidelberg, Julius Groos Verlag.
9. **Horster H. (1991)**, A Heart Plays False. Cologne, Lingen Verlag.
10. **Nieberle S. & Strowick, E. (Eds.) (2006)**, Narration and Gender: Texts, Media, Epistemes (Literature, Culture and Gender. Major Series, Vol. 42), Böhlau Verlag.

Анна Согомонян

Образование единственного и множественного числа местоимений и их семантико-функциональные проявления в литературном восточноармянском, немецком и русском языках

Заключение

Ключевые слова и выражения: местоимение, единственное число, множественное число, грамматическое число, супплетивная (разнокорневая)

форма, коллективный показатель, образование числовых форм, флексия / склонение.

Настоящая статья посвящена исследованию категории числовой реализации местоимений в литературном восточноармянском, немецком и русском языках, с учётом их реляционных характеристик, морфологической неоднородности и синтаксических особенностей. В ходе анализа выделяются три основные модели числовой реализации местоимений: двучисловые формы, местоимения, употребляющиеся исключительно в единственном числе, и местоимения, функционирующие только во множественном числе. Морфологическая неоднородность и синтаксическая специфика местоимений определяют их стилистическое варьирование, особенно заметное в числовом аспекте. Единственное число, обладая широкой семантической сферой, в ряде случаев позволяет выражать мысль более обобщённо и экспансивно, чем множественное. Сопоставительный анализ структурных и семантических асимметрий числовых форм в трёх языках направлен на выявление как универсальных закономерностей, так и специфических особенностей, отражающих глубинные черты грамматической системы и когнитивной структуры языка. Исследование выявляет значимые различия в употреблении числовых форм местоимений, что свидетельствует о языковой специфике их грамматического функционирования.

Anna Soghomonyan

The formation of singular and plural pronouns and their semantic-functional manifestations in literary Eastern Armenian, German, and Russian

Conclusion

Key words and expressions: *pronoun, singular, plural, singularia tantum, numerus, suppletive form, collective marker, number formation, flexion.*

This article is dedicated to the study of the category of numerical realization of pronouns in literary Eastern Armenian, German, and Russian, with particular attention to their relational characteristics, morphological heterogeneity, and syntactic peculiarities. The analysis identifies three principal models of numerical realization in pronouns: dual-number forms, pronouns that occur exclusively in the singular, and pronouns that function solely in the plural. The morphological heterogeneity and syntactic distinctiveness of pronouns play a crucial role in shaping their stylistic variability, which is particularly evident in the domain of number. The singular, encompassing a broader semantic field, in certain contexts allows for a more generalized and expansive conceptualization than the plural. The comparative examination of structural and semantic asymmetries in numerical forms across these three languages seeks to uncover both universal linguistic patterns and language-specific features, reflecting fundamental properties of their grammatical systems and cognitive frameworks. This investigation not only reveals significant differences in the use of numerical pronoun forms but also demonstrates how these distinctions contribute to a deeper understanding of the unique grammatical mechanisms governing each language. By highlighting these discrepancies, the study underscores the importance of number as a key factor in linguistic variation and cognitive categorization across languages.

Աննա Սողոմոնյան – Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և պատմության ամբիոնի հայցորդ, Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գերմանական բանասիրության ամբիոնի դասախոս: Հեղինակ է երկու տպագրված գիտական հոդվածի: annasoghomonian@ysu.am

Анна Согомонян – Аспирантка кафедры армянского языка и истории факультета армянской филологии Ереванского государственного университета

(ЕГУ), преподаватель кафедры немецкой филологии факультета европейских языков и коммуникации ЕГУ. Автор двух опубликованных научных статей.

annasoghomonian@ysu.am

Anna Soghomonian – PhD student at the Department of Armenian Language and History, Faculty of Armenian Philology, Yerevan State University (YSU), and lecturer at the Department of Germanic Philology, Faculty of European Languages and Communication, YSU. Author of two published scientific articles.

annasoghomonian@ysu.am

Խմբագրություն է ուղարկվել 18.12.2024թ.

Հանձնարարվել է գրախոսության 20.01.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 20.06.2025թ.